ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի սոցիալական աշխատողներ, ոլորտի հարգելի ներկայացուցիչներ, շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի՝ սոցիալական աշխատողի օրվա կապակցությամբ:

Անգնահատելի է այն աշխատանքը, որ դուք իրականացնում եք մասնագիտական գործունեության շրջանակներում՝ ի նպաստ անհատի և ընտանիքի սոցիալական պաշտպանության, առողջ, իրազեկ և իրավահավասար հասարակության ձևավորման, ամուր և արժանապատիվ պետության կերտման գործում:

Սոցիալական աշխատանքը մասնագիտություն լինելուց զատ առաջին հերթին ինքանվիրում է, որովհետև այլ կերպ անհնար է սատար կանգնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված ընտանիքին ու երեխային, հայրենիք կորցրած փախստականին:

Ձեր աշխատանքն անգահատելի էր հատկապես մեր հայրենիքի համար օրհասական պահերին՝ պատերազմի ու համավարակի, արցախահայության տեղահանության և հարենիքում ապաստան գտնելու օրերին:

Երախտապարտ եմ ձեզ ձեր բարդ և լարված աշխատանքը պատվով կատարելու, համբերության համար:

Սոցիալական աշխատանքը շարունակաբար զարգացող և մշտապես արդիական աշխատանք է:

Ուստի մաղթում եմ ձեզ տոկունություն, անկոտրում կամք և համբերություն՝ ձեր առջև ծառացած խնդիրների լուծման և հանրօգուտ նախաձեռնությունների իրականացման գործում:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան